# ՅՈՒՑԱԿ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

## № 140
## ԵՒԱԳՐ

*ԹԵՐԹԵՐԸ 370։— ՊՐԱԿՆԵՐԸ 32, յուրաքանչիւրը 12 թերթից, ի բաց առեալ Ա և Զ 11, Լ՝ 4, ԼԲ 8 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ 19,2×14,5×5,2 սմ.։— ՆՅՈՒԹԸ դեղնած և կեղտոտած հասարակ թուղթ։— ԿԱԶՄԸ կաշեպատ տախտակ։ Կաշվի վրա ձնշումով նկարված կաշեպատ տախտակ։ Զույգ բռնիչները ընկել են։— ՊԱՀԵՆ որոշ զարդեր։ Զույգ բռնիչները ընկել են։— ՊԱՀԱՆԱԿՆԵՐԸ սկզբում և վերջում կան երկուական թերթ հասարակ թուղթ։— ՎԻՃԱԿԸ ձեռագրի սկզբից պակասում են երկու լրիվ պրակներ։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ միասյուն։— ՏՈՂԵՐԸ 23—26։— ԳՏՈՒՄՆԵՐԸ ճընշումով։— ԳԻՐԸ նոտրգիր։— ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐԸ 350, 367—370։— ՁԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ կան բավական սիրուն թռչնագրեր, լուսանցազարդեր և երկու կիսախորաններ (Բ. Բ. 76ա և 265ա)։— ԳՐԻՉԸ Ս. Կարապետ վանքի միաբան Սամվել վարդապետ։— ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ՝ Երնջակի հովվապետ Մեսրոպ։— ՄԱՂԿՈՂԸ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ 1718 թ.։— ՎԱՅՐԸ Երնջակի Ս. Կարապետի վանք։— ՄԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է Թբիլիսիից 1952 թվականին, Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանի միջոցով։*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Բ. 7բ.—Վասն ութ խորհրդոցն։*

*Բ. 32բ.— Վասն այնոցիկ, որ ընդ քնոյն ցնորքն անցանէ։*

*Բ. 35բ.— Վասն հաստատութեան, որ մեր և յանախտութիւնն։*

*Բ. 43բ.— Վասն նշանակաց անցաւութեան։*

*Բ. 69ա.— Նորին Եւագրեայ բան խրատու։*

*Բ. 71բ.— Հաւատք, որ ի Նիկիայն հաստատեցաւ։*

*Բ. 76ա.— Գիրք երկրորդ գիտնաւոր և արդիւնաւոր Եւագրեայ սրբոյ հօրն։*

*Բ. 99ա.— Եւագրեայ երանելոյն, առաջին լուսաւոր պատերազմին։*

*Բ. 155ա.— Վասն ընդունելութեան։*

*Բ. 183ա.— Վասն պաշտամանց եղբարցն։*

*Բ. 235բ.— Սրբոյն Եւագրեայ բան խրատոյ։*

*Բ. 265ա.— Գիրք երրորդ սրբոյն հօրն Եւագրեայ, գրոց սրբոց պատասխանիք, ընդդէմ դիւացն որք փորձենն զմեզ։*

*Բ. 283բ.— Առ խորհուրդսն պոռնկութեան։*

*(Ձեռագրի գրիչը համարակալել է այն մինչև ԻԲ պրակը՝ Բ. 322, ապա սկսել է դարձյալ Ա-ից։ Ուրեմն Բ. 323-ով սկսվում է երկրորդ մասի Ա պրակը։ Երկու մասերն էլ նույն գրչի գործն են)։*

*Բ. 323ա.— Այլ խրատ Եւագրեայ, բան խրատու։*

*Բ. 323բ.— Նորին առ աշակերտն իւր, գիր և դիմակ բանից։*

*Բ. 324բ.— Նորին Եւագրեայ, բան խրատու միակեցաց։*

*Բ. 327բ.— Նորին Եւագրեայ, թուղթն առ Մելինէ տիկինն, զի առաքեաց առ Եւագր, թէ ուր և զիա՞րդ կացցէ, և գրեաց առ զփորձութիւնս իւր։*

*Բ. 328ա.— Նորին երկրորդ թուղտ։*

*Բ. 328բ.— Երրորդ թուղթ նորին։*

*Բ. 329ա.— Չորրորդ թուղթ Մելինեայ։*

*Բ. 330ա.— Հինգերորդ թուղթ Մելինէ։*

*Բ. 330բ.— Վեցերրորդ թուղթ։*

*Բ. 331բ.— Եօթներորդ թուղթ Մելինեայ։*

*Եւագրեայ ութերորդ թուղթ։*

*Բ. 332ա.— Իններորդ թուղթ Մելինեայ։*

*Բ. 332բ.— Տասներորդ թուղթ Մելինեայ։*

*Մեւտասաներորդ թուղթ Եւագրեայ։*

*Բ. 333բ.— Երկոտասաներորդ թուղթ Մելինեայ։*

*Երեքտասաներորդ թուղթ Մելինեայ։*

*Բ. 334ա.— Չորեքտասաներորդ թուխտ Մելինեայ։*

*Հինգտասաներորդ թուղթ Մելինեայ։*

*Վեշտասաներորդ թուղթ առ եղբարք։*

*Բ. 335ա.— Եօթտասաներորդ թուխթ Եւագրեայ։*

*Բ. 335բ.— Ութեւտասաներորդ թուղթ Եւագրեայ։*

*Բ. 336ա.— Իններեւտասաներորդ թուղթ Մելինեայ։*

*Թուղթ Եւագրեայ Ի։*

*Բ. 336բ.— Թուղթ Եւագրեայ ԻԱ։*

*Նորին Եւագրեայ խրատ վասն կուսանաց։*

*Բ. 338ա.— Նորին Եւագրեայ առաջնորդաց և աշակերտաց։*

*Բ. 339ա.— Նորին Եւագրեայ խրատ։*

*Բ. 340ա.— Եւագրեայ վասն Սերովբէից։*

*Բ. 340բ.— Այլ թուղթ Եւագրեայ։*

*Բ. 342ա.— Այլ թուղթ նորին։*

*Բ. 342բ.— Այլ թուղթ նորին վասն մխիթարութեան։*

*Բ. 344ա.— Թուղթ մխիթարութեան։*

*Բ. 344բ.— Թուղթ նորին։*

*Բ. 345բ.— Լուծմունք, զոր արարեալ է ումեմն կատարելոյ ի լեռնէն Նինուէի ի խնդրոյ եղբարց։*

*Բ. 351ա.— Գիր վասն հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, գրեալ ի Ներսէս հայոց կաթողիկոսէ յեղբօրէ Գրիգորի Վկայասիրի, ի խնդրոյ գերապատիւ փեսային, ինքնակալ թագաւորին հռոմոց Ալէքսիոսի։*

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1960 թվականի № № Ե-ից, Է-ից, Թ-ից և 1961 թվականի № № Բ-ից, Դ-ից և Զ-ից։*

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

Թ. 75բ.— Շնորհօք մարդասիրին և օգնականութեամբն Աստուծոյ կատարեցան առաջին գիրք, սուրբ և երիցս երանեալ երջանիկ հօրն մերոյ Եւագրեայ, զորս արարեալ է շնորհօք Հոգւոյն Սրբոյ, ի շահ և յօգուտ առաքինասէր և արդիւնաւորական կրօնաւորաց, և բնաւ իսկ աշխատասէր պաշտօնէից Տեառն, որք հետևին ընդ շաւիղս առաջին հաստատութեան մտաց և խորհրդոց։

Արդ, ո՜վ աստուածասէր հարք սուրբք և հրեշտակակրօն եղբարք, որք օգտիք և լուսաւորիք ի լուսաւոր բուրաստանէ սուրբ գրոցս, յիշեսջիք ի սուրբ յաղօթս ձեր զսակաւ աշխատող որպէս զախմարամիտ և եղերնագործ և անպիտան Սամուէլ անարժան Լեթ վարդապետս, և զծնօղսն իմ և զարեան մերձաւորս իմ, և Աստուած զձեզ յիշէ ի սուրբ հարանց բարեխօսութիւնն և յիւր ողորմութիւնն, ամէն։

Թ. 154բ.— Յոյս և ապաւէն ազգի մարդկան, Երրորդութիւն Սուրբ, լեր այցելու, և խնամող, և պաշտպան մեղուցեալ քո ծառայիս, Սամուէլ Լեթ անուամբ գծագրող վարդապետիս, ջնջեա զձեռագիր իմոց յանցանաց, և զաղտ հնութեան մեղաց լուա և բովանդակ հրեշտակերամ և երկնախումբ եղբայրութեան սորա, մեծի և փոքու առհասարակ, ողորմեա, և անմահ փառացն և պսակացն արժանաւորեա, և քեզ փառք յաւիտեանս, ամէն։

Թ. 235բ.— Ո՜վ սուրբ ընթերցօղք և մեղսաքաւիչք քահանայք, խնդրեմ վասն Աստուծոյ և ի սէր հոգւոց ձերոց, մի մոռանայք զշնչին և զանարժան լուկ անուամբ, Սամուէլ Լեթ վարդապետս, գծող սրբազան Եւագրեայ գրքիս, այլ միով Հայր մերիս և Հոգոցիս, լիով սրտիս թողութիւն շնորհեսցէք։

Թ. 365ա.— Յիշատակարան գրոյս։

Փառք անսկզբանն և սկզբանն ամենայնի.....

Որ ետ կարողութիւն տարտամ և ապիկար անբժշկական վիրօք լցեալ անձինս, հասանիլ յաւարտ մատենիս լուսապաճոյճ, որ է սահմանք ճգնաւորական հանդիսից Սրբոյն Եւագրեայ, անմարմնոյն ի մարմնի, և հասոյց յաւարտ սորին, զօրացուցիչն տկարաց, Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի փառս իւր (p. 365բ) զոր ապաւինեալ ի տնօրինիչն և լցուցիչն խնդրուածոց հզօր Սուրբ Հոգին, և ողորմութեամբ նորին աւարտեցաւ և եղև զրաւ, երեք հատոր սուրբ գիրքս, որ գոչի Եւագր, յոյժ պիտանի և օգտակար, կենսաբուխ վտակացս այսոցիկ և երկնահրաւէր ճառս միանձանցն ասացեալ սրբութեան։

Արդ, ի ժամանակս կենաց և աւուրց ի հայրապետական իշխանութեանց և պետութեանց, սրբազնազարդի Տեառն Աստուածատրոյ կաթողիկոսի յամի թվահաշութեան ազանց արմաեական սեռից մի հազարի, և մու հարիւրի, վեշտասանց և եօթնեկի (1718), ի յերկիրս Երընջակայ, ի բազմահաւաք սրբարանիս մեծի, և տիեզերալուր հռչակաւոր Սուրբ Աթոռոյս Սրբոյն Կարապետի, հրամանաւ մեծին Մեսրոպայ Աստուածասքանչ հովապետի Երընջակայ, և սրբավճիտ վերատեսողի նորին նահանգի։ Եւ և ըստ հոգիածին և մաքրասնունդ զաւակաց իւրոց յոլովագունից։ Եւ ըստ նարդենիս Տեառն աստուածաբան վարդապետացն Յովհաննիսին, Եսայիին, և նոր առեալ գաւազան իշխանութեան և հոգէբարձու Մինաս վարդապետին։ Եւ նոր հանգուցեալ Եղիայ վարդապետին, և Տէր Յակոբին, զոր Տէրն Քրիստոս աղօթիւք սրբազան եղբարցս մերոց, զհոգի (p. 366ա) սոցա ընդ դասս արդարոցն դասեսցէ և պսակեսցէ, ամէն։

Նաև յոքունց քահանական դասուց խմբից, սրբակրօն և առաքինի, հաւատարիմ պաշտօնեայ Սուրբ Աթոռոյս, մեծ Տէր Մինասին, Տէր Վարդանին, որ յամս ամի, յոյժ փափականօք գնաց յԵրուսաղէմ, առ ի յերկրպագութիւն լուսընկալ Սուրբ Գերեզմանին Քրիստոսի Աստուծոյ մերոյ։ Տէր Կարապետին, Տէր Գրիգորին, Տէր Սողոմօնին, և Տէր Ղազարին, Տէր Մխիթարին և լուսարար նոր ընծայ Տէր Յովհաննիսին։ Այլ և հոգևոր եղբօրն իմոյ տիրացու Մկրտչին, որ յոյժ աշխատեաց ի սմա, և Տէր հատուսցէ զվարձս իւր։ Նաև հոգևոր հօրն մերոյ Նազար պապին, և յոլովից եղբարց, փոքունց և մեծամեծաց, որք ի կաճառս ուսումնասիրութեան կան ի մարդումն կրթութեան։ Այլ և խնդրեմ ի բարեբար Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, զի շնորհեսցէ ընդ երկայն աւուրս հոգևոր հօրն մերոյ, զի աղօթիւք և պատարագօք զՍուրբ Աթոռս հաստատուն և պայծառ պահեսցէ։ Եւ ըստ աշխատանաց և նեղութեանցն, հոգևոր և շնորհազարդ հօրն մերոյ, հանդերձ սրբակրօն միաբանիւք, աստ և ի հանդերձեալն կրկնակի փառօք զարդարեսցէ, և մանաւանդ համարձակեալ ասիցէ.— Ահա ես և մանկունք իմ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Թ. 366բ.—Արդ, ո՜վ որդիք մօր Սիոնի
Եւ ճաշակողք սորա պտղի,
Հարք և եղբարք սուրբ երամի,
Որք հանդիպիք այսմ տառի,
Յորժամ աչք ձեր ի սա հայի,
Եւ յընթեռնուլ զսա յօժարի։

Սա կոչեսցի գիրք Եւագրի,
Գրեալ ձեռամբ Սամուէլի,
Որ ոչ ունիմ գործ մի բարի,
Եւեթ անուամբ վարդապետի։

*Սա է սեղան ամէնալի,*
*Հացին կենաց ով ճաշակի,*
*Սա է կուժ անմահ ջրի,*
*Ջմայլումն քաղցրը զերդ մեղրի,*

*Ով թէ ի սմանէ ճաշեսցի,*
*Ի յաւիտեան մի ծարաւի,*
*Անմահ հացին արժան լինի,*
*Ի յաւիտեանս ապագայի։*

*Ձձեզ աղաչեմ արտասուալի,*
*Հայցեմ ի ձէնջ տենչմամբ սրտի,*
*Ձի բոլոր սրտիւ, և լի բերանով,*
*Խնդրէք ամենապարգև Տեառնէն,*

*Միղացս իմոց թողութիւն,*
*Եւ ծնօղացս հանգիստ և*
*արքայութիւն։*
*Եւ եմ անպտուղ ի բարեաց*
*Եւ թափուր ի շնորհաց։*

*Ո՛վ հարք և եղբարք իմ, անմեղադիր լե-րուք խոշորութեան գրոյս, զի կարողութիւն իմ այս էր։*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*(Սկզբի պահպանակի Ա էջ)՝*

*...խտ վարթապետին ՆՌ։ (Արաբերեն թվանշանները 1-ից մինչև 9)։*

*Թ. 369բ.— (այս զ) Ձոր ապաւինեալ, ի տնօրինիչն և լցուցիչն, խնդրուածոց հզօր Սուրբ Հոգին, և ողոր-մութեամբ նորին աւարտեցաւ և եղև գրաւ, երեք հա-մութեամբ նորին աւարտեցաւ և եղև գրաւ, երեք հա- տոր սուրբ գիրքս որ գոչի Եւագր, յոյժ պիտանի և օգտակար կենսաբուխ վտակացս այոցիկ, երկնահրա-ւէր ճառս միանձանցն ասացեալ սրբութեամբ։ Արդ, ի ժամանակս կենաց և աւուրց ի հայրապետական իշ-խանութեանց և պետութեանց, սրբազնազարդի, պայ-ծառ բազաստութեամբ արդարեւ հոգիս զնոր լոյս բազդաւն ողրոցն միաբանութեան։*

*Թ. 370ա.— Յարպաւին, զոր ապաւինեալ ի տնօ-րինիչն, ո՛վ երան, ո՛վ երջանիկ և փառազարդ, ար-ժանապատիւ և գորովայգութ յայր մի։ Անարժան ծա-ռայ սարկաւագ Տէր Մկրտիչեան Տէր Աստուածատա-րեանց։*

*Թ. 370բ.— Եւագիր։ Գրեած Երնջակու վանքում, հայկական 1167 թուականին, փրկչական 1718 թուա-կանին, Աստուածատուր կաթողիկոսի ժամանակ։*

№ 141

ՊԱՐՁԱՏՕՄԱՐ

*ԹԵՐԹԵՐԸ՝ 80։— ՊՐԱԿՆԵՐԸ՝ 6, անկանոն ծավալով (Ա՝ 18, Բ՝ 20, Գ՝ 8, Դ՝ 11, Ե՝ 10 և Զ՝ 13 թերթերից)։ — ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 19×16,2×1,6 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ կեղտոտած և դեղնած հասարակ հաստ թուղթ։— ԿԱԶՄԸ՝ չունի։— ՊԱՀՊԱՆԱԿՆԵՐ՝ չունի։— ՎԻՃԱԿԸ՝ քայ-քայված և թերի։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ միասյուն։— ՏՈ-ՂԵՐԸ՝ 16—18։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ նոտրգիր։— ԶԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ չկա։— ԳՐԻՉԸ՝ ան-հայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԸ—ԺԹ դ. դ.։— ՎԱՅՐԸ՝ ան-հայտ։— ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ այս ձեռագիրը ստացված է 1954 թվականին Բաքվի հայոց եկեղեցուց, պրոֆ.-դոկտ. Աշոտ Աբրահամյանի միջոցով։*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Թ. 1ա.— Պարզատոմար ըստ հռոմայեց-ւոց, գիր տարւոյ։*

*Թ. 49ա.— (Երկու ոտանավորներ՝ 5 և 31 տներից)։*

*Թ. 56ա.— Հարց և պատասխանի ուսում-նական ի մէջ Հայկայ և Պօղայ, խորհած թուոյ իմանալոյ այլ և այլ օրինակաւ։ Օրի-նակ ջուխ թուոյ։*

*Թ. 68.— (Բժշկական զանազան դեղա-տոմսեր)։*

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

*Թ. 1ա.— ...Հալմայ։*

*Թ. 4ա.— 1874 թ. Աննան պսակուեց, նոյն թ. Մար-գարիտը մեռաւ։*

*Թ. 28ա.— 1921 գիր տարուն Ռ, եօթներեակ Է, վե-րագիր Բ, տանուտէրը՝ Աղեղնաւորը։*

*Թ. 58բ.— Արէքագան խաւարումն էլավ, յուլիսի 16-ին 1851 թիւոյ սահաղի վեցին։*

*Թ. 62բ.— Արեգագըն խարեմըն էլավ։*

*Թ. 67բ.— 1858 ամի սեպտեմբերի։*

*Թ. 72բ.— 1 հլիս հղեղըն գիր հաջաղին գլխին մեռ-նի, օղիս մեանի։*

*Թ. 73բ.— Արչ խորնեզու ձաղ և կան փշրէ նարլն, ջերմող մարտի դուրխ մի բերան դաք ջուր խմէ, լենի շաշան Դ ցրուբաշ։*

№ 142

ԱԻԵՏԱՐԱՆ

*ԹԵՐԹԻՐԸ՝ 333։ —ՊՐԱԿՆԵՐԸ՝ 28, յուրաքանչյուրը 12 թերթից, ի բաց առյալ ԻՁ՝ 9, ԻԸ՝ 10, Ի՝ 11 և Ա, Թ, ԺԳ, ԻԱ՝ 13 թերթից։— ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ՝ 13,2×10,5×6,8 սմ.։— ՆՅՈՒԹԸ՝ դեղնած և տեղ-տեղ կեղտոտած բարակ մագաղաթ։— ԿԱԶՄԸ՝ կաշեպատ տախտակ, որի վրա ամրացված են բազմաթիվ մեծ գլխով գամեր։ Կազմի երկու երեսներում ժամանակին եղել են մեկական խաչ, որոնք հետագայում ընկել են։ Ընկել են նաև կազմի երկու բռնիչները։— ՊԱՀՊԱ-ՆԱԿՆԵՐ՝ չկան։— ՎԻՃԱԿԸ՝ լավ։— ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ երկսյուն։— ԴԱՏԱՐԿ ԹՂԹԵՐ՝ չկան։— ՏՈՂԵՐԸ՝ 20։— ԳԾՈՒՄՆԵՐԸ՝ ճնշումով։— ԳԻՐԸ՝ բոլորգիր։— ԶԱՐ-ԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ձեռագիրն ունի չորս ավետարանիչ-ների բավական գեղեցիկ մեծ նկարները (թ. թ. 9բ, 101բ, 160բ, 253բ), ինչպես նաև չորս սիրուն խո-րաններ (թ. թ. 10ա, 102ա, 161ա, 254ա)։ Կան նաև թռչուններ, խաչեր, զմրեթներ, լուսանցազարդեր, զար-դագրեր և մի հատ էլ սրբագիր (թ. 10ա)։— ԳՐԻՉԸ և ԾԱՂԿՈՂԸ նույն անձն է, որ դժբախտաբար հի-շատակարանում չի գրել իր անունը։— ՊԱՏՎԻՐԱ-*

ՏՈՒՆ՝ անհայտ։— ԺԱՄԱՆԱԿԸ՝ ԺԴ—ԺԹ դ. դ. (համենայն դեպս 1352 թվից առաջ է գրված)։— ՎԱՅՐԸ՝ Երուսաղեմի Ս. Հրեշտակապետաց տաճարը։— ԾԱՆՈՒԹՅՈՒՆ՝ սույն ձեռագիրը ստացված է 1960 թվականի հունվար ամսին, Վեհափառ Հայրապետից։

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 331ա.— Փառք համագոյ, միապատիւ և միաթագ երիս անձնաւորութեան և մի աստուածութեանն, Հաւր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն, Ռ (1000) ամէն։

Գրեցաւ սուրբ և լուսաթիզ և կենսակիր սուրբ աստուածաւանդ, աստուածախաւս Սուրբ Աւետարանս, ի Սուրբ քաղաքս Երուսաղէմ, ի դրունս սուրբ և փառաւորեալ տաճարիս Քրիստոսի Սուրբ Հրեշտակապետացն, ձեռամբ իմով անարժան և մեղսաթաւալ փանաքի և անարհեստ գրչի, և ես մեղաւոր հողս յոյժ բաղձանաւք և մեծաւ աշխատութեամբ գծագրեցի զսա ի լուսաւորութիւն Սուրբ Եկեղեցւոյ։

Արդ, յերեսս անկեալ աղաչեմ մաւաւանդ զրդասս քահանայից, որք ընթեռնոյք զՍուրբ Աւետարանս յիշել (թ. 331բ) ի մեղսաքաւիչ և ի սուրբ աղաւթս ձեր զսուտ անուն գրիչս, առաջին ի մեղաւորս և յետինս յամենայն բարէգործաց, զմեղաւք լցեալս և զսրտէ խոցեալս և զմեղուցեալ հոգի իմ և զծնաւղաց իմոց, ևս և զարժանաւորսն յիշատակի, որք աշխատեալ են յիս, զհաւրեղբայրն իմ զԳրիգոր քահանայն, զհաւրքաւրիկն իմ, զի շատ աշխատեցան հետ մեզ ի հոգևորն և ի մարմնաւորն, Քրիստոս միկին հարիւրապատիկ յիր առատ ողորմութենէն հատուցէ իրենց յիւր միւս անգամ գալուստն։ Յերեսս անկեալ աղաչեմ սուտանուն գրչիս, որք ընթեռնոյք զսա, զինչ աւրինակաւ և իցէ չմեղադրել անյարմար գրիս և սղալմանս ներեցէք և մի անողորմն բան արձակէք, զի այս չափ էր կար (թ. 332ա) մեր և Քրիստոս յիշելոցս և յիշողացդ ողորմեսցի։ Եւ Քրիստոսի յուսոյն մերոյ փառք յաւիտեանս, ամէն, Ռ (1000) ամէն։

## ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թ. 2բ.— ԶՇահում Վարդս յիշեցէք յաղօթս ձեր, ամէն։

Թ. 3ա.— Ես պարոն Վարդս գնեցի զՍուրբ Աւետարանս ի հալալ վաստակոց իմոց իմոց յիշատակ ինձ և ծնողաց իմոց, հօրն իմոյ Շահրի բէկին և մօրն իմոյ Մինայ խաթունին և եղբարն իմոյ Սատաշին և այլ ամենայն արեան մերձաւորաց իմոց։ Ով որ հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէք յաղօթս ձեր և Աստուած զձեզ յիշէա, ամէն։

Թ. 3բ.— Ես Ովանէս իմ աղբոր Մկրտչին հոգուն տվի Ա եզն, Աստուած ող...։

Թ. 5բ.— Անուն Աստուծոյ, Աստուած ողորմի Վահագին։

Թ. 6ա.— Մսր Մելիքին, իւր զաւակին Առաքելին։

Թ. 8բ.— Ես Մելիք Սարգիս իմ էգին տվի վասմ Ովանէս եպիսկոպոսիսին, կէս գին առիք։ Աստուած ողորմի Մելիք Սարգսին, և Կիրակոսին, Շահրուդին, իւր արեան մերձաւորացն, ևս առօել Գրիգորին, Մելիքշին, Ազիզին։ Ես որ վկայ, Արաղիզ, Խէրպարոն, Հովան։

Թ. 9ա.— Զվերջին ստացաւլ լուսաթիզ, կենսակիր զաստուածաւանդ և զաստուածախաս զՍուրբ Աւետարանիս զպատուելի և զսքրբամիտ և զհեղահոգի քահանայն զՅոհանէս և զծնողսն իւր զԱտամ և զմայրն իւր, նաև զհարազատ եղբարս իւր զկուսակրաւն քահանայրն զփոխեցեալսն առ Քրիստոս աղաչեմ յիշել ի Տէր սրտի մտաւք և մեղաց թողութիւն խնդրել, զի յոյժ նուաստաբար սրտիւ ստացաւ զսա ի հալալ արդեանց ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողացն իւրոց և եղբարց և ամենայն արեան մերձակայից իւրոց։ Արդ, ով դասք լուսերամիկ, որք հանդիպիք սմայ, յիշեսջիք զվերոյգրեալսդ, աղաչեմ, և որք յիշէք յիշեալ լիջիք և դուք, Քրիստոս Յիսուս որ է աւրհնեալ։

Զ Սուրիաս և զՅովա։

Թ. 100բ.— Ես Ղուկաս եպիսկոպոս, Սուրբ Աւետարանս տվի Զագարին, ոն ում բանն կայ ոն ում դաւի, ոն մեծի ոն փոգրոգ։

Թ. 101ա.— Ես Զաքարս յիշատք դրի Սուրբ Աւետարանս ինձ և իմ ծնողաց Ղանտոին, մաւր ...բաղուխին և իմ զաւակացն Տէր Մարտիրոսին, Ղանդոյին, իմ կողակցին Գոլոյին, ով հանդիպիք մի բերան ողորմի ասացէք։

Թ. 101բ.—...րկէն պարոն, Տէր Սիմոն, Տէր Մկրտին, Ամիր վկային քահանայ Համոն ու Մղաւ... կայ անիծած է դաւի անողն։

Թ. 102ա.—Աստուած բարով վէլ... Տէր Մարտիրոսին, Աստուած... աւորան է։

Թ. 323ա.—Աստուած ողորմի Դորոսին։

Թ. 323բ.—Սարգսին, ով յիշէ։

Թ. 324ա.—յիշեալ եղիցի ջուրդ ատամ։

Թ. 392ա.—Գրեցաւ ի թվիս հայոց Պ (1352)։ Ես Շամշս գնեցի զՍուրբ Աւետարանս ի հալալ ընչից իմոց, յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց, հաւրն իմոյ Գրիգորին, և մաւրն իմոյ Շնոֆորին, եղբաւրն իմոյ Մելիքշին, և միւս եղբաւրն Անդրեասին և Հազարշին, և կենակցին իմոյ Մարթային և դստերն իւրոյ Հեղինին, և այլ ամենայն արեան մերձաւորաց իմոց, յիշեցէք սուրբ քահանայք յաղաւթս ձեր և Աստուած զձեզ յիշէ, ամէն։

Թ. 332բ.—Ես Սորաջանտա, Աստուած ողորմի Փիրալուն, իւր դա։

Թ. 333ա։— Աստուած ողորմի Գրիգորին, Աստուած ողորմի Մկրտին, Աստուած ողորմ Սարգսին, և ամենց...նին։

(Շարունակելի)